

«ՀՀ կառավարության 2011 թ. հունվարի 13-ի թիվ 12-Ն որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագծի ընդունմամբ կապահովվի ՀՀ կառավարության որոշման համապատասխանեցումը «Չենքի շրջանառության կարգավորման մասին» օրենքին:

Նախագիծ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ
ՈՐՈՇՈՒՄ

----- 2023 թվականի N - Ն

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ 2011 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆՎԱՐԻ 13-Ի ԹԻՎ 12-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 33-րդ և 34-րդ հոդվածների համաձայն՝ Հայաստանի Հանրապետության կառավարությունը որոշում է.

1. Հայաստանի Հանրապետության կառավարության 2011 թվականի հունվարի 13-ի «Չենքի առևտրի լիցենզավորման կարգը, զենքի առևտրի լիցենզիա ստանալու մասին հայտի և լիցենզիայի ձևերը հաստատելու մասին» N 12-Ն որոշման (այսուհետ՝ Որոշում) և որոշմամբ հաստատված կարգի հավելվածներում (այսուհետ՝ Հավելված) կատարել հետևյալ փոփոխությունները՝

1) Որոշման նախաբանում «6-րդ» թիվը փոխարինել «5-րդ» թվով, իսկ «Չենքի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 9-րդ հոդվածի 1-ին մասին» բառերը փոխարինել «Չենքի շրջանառության կարգավորման մասին» օրենքի 10-րդ հոդվածի 2-րդ մասին» բառերով:

2) Հավելված 1-ի 2-րդ կետի ««Չենքի մասին» Հայաստանի Հանրապետության» բառերը փոխարինել «Չենքի շրջանառության կարգավորման մասին» բառերով,

3) Հավելված 1-ի 3-րդ կետից «Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր» բառերը հանել,

4) Հավելված 1-ի 10-րդ կետի 5-րդ ենթակետից հանել «առնվազն 3 տարի ժամկետով կնքված» բառերը, իսկ 7-րդ ենթակետում «և բժշկական տեղեկանքների պատճենները՝ նարկոլոգիական և հոգեբուժական բժշկական հաստատություններում հաշվառման մեջ չգտնվելու վերաբերյալ» բառերը փոխարինել «պատճենը և զենքի տիրապետմանը խոչընդոտող հիվանդությունների և ֆիզիկական թերությունների բացակայության վերաբերյալ բժշկական եզրակացությունը» բառերով:

5) Հավելված 1-ի 13-րդ կետում «3 տարի ժամկետով: Լիցենզիայի գործողության ժամկետը հայտի հիման վրա կարող է երկարաձգվել 5 տարով» բառերը փոխարինել «անժամկետ» բառով:

6) Հավելված 3-ում «Գործողության ժամկետը» բառերից հետո «մինչև» բառը հանել:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

Հայաստանի Հանրապետության

վարչապետ

Ն.Փաշինյան

ք. Երևան

« » _____ 2023թ.